ԿԱՐԾԻՔ

Աստղիկ Սերգոյի Հայրապետյանի՝ «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի հայցմանը ներկայացված «ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ (2000-2008 ԹԹ.)» ատենախոսության վերաբերյալ

2000-2008 թթ. ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ՝ քաղաքական ու կիրառական անհրաժեշտություն և էական կարևորություն:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքական օրակարգային առաջնահերթություններից է նաև մերձավորարևելյան ուղղությունը: «Սառը պատերազմի» ավարտից և ԽՍՀՄ փլուզումից հետո, անհրաժեշտություն առաջացավ վերանայել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ռազմավարական նպատակները և դրանց իրականացման մեթոդները նաև փոխակերպվող աշխարհակարգի մաս կազմող Մերձավոր Արևելքում: ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը ընդունված է բաժանել մի քանի խորհրդանշական փուլերի: Առաջին փուլ՝ 1945-1971 թթ., երկրորդ՝ 1971-1979 թթ. և երրորդը՝ 1979-2011 թթ.: Հենց այս երրորդ փուլում, մասնավորապես՝ իրաքյան զորքերի Քուվեյթ ներխուժման և ԽՍՀՄ փլուզման և 09/11 ահաբեկչության հետևանքով, պաշտոնական Վաշինգտոնն առաջ քաշեց Մերձավոր Արևելքում «ռազմական անմիջական ներկայության» հայեցակարգի կիրարկումը:

Մերձավոր Արևելքում ամերիկյան «ռազմական անմիջական ներկայության» հայեցակարգային մոտեցումը էլ ավելի ամրապնդվեց Ջ. Բուշ-կրտսերի նախագահության շրջանում, երբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը ներազդում էին այսպես կոչված նեոպահպանողականները՝ Դիք Չեյնին, Դոնալդ Ռամսֆելդը, Կոնդոլիզա Ռայսը, Փոլ Վուլֆովիցը և այլք:

2003 թ. աշնանը, Բուշ-կրտսերը ԱՄՆ-ի Ժողովրդավարության ազգային հիմնադրամ-կազմակերպությունում ունեցած իր ելույթում պաշտոնապես հայտարարեց Մերձավոր Արևելքի «վերակառուցման» նոր դոկտրինը, որը

նույնականացվում է «Մեծ Մերձավոր Արևելք» հայեցակարգի հետ: Հայեցակարգը ենթադրում էր, որ 30-35 տարիների ընթացքում Մերձավոր Արևելքը պետք է «արդիականացվեր և կերպափոխվեր՝ հիմք դնելով տարածաշրջանում ժողովրդավարացմանը»՝ ԱՄՆ-ը հովանու ներքո:

Ռազմական աշխարհագրագետներ Բեռնարդ Լյուիսը, Ռալֆ Փեթերսը, Ռոբին Ռայթը և այլոք, անգամ «ապագա» Մերձավոր Արևելքի քարտեզներ էին մշակել, որոնք պետք է ամրագրեին ԱՄՆ-ը գերակայությունը այդ տարածաշրջանում:

Հետաքրքրական է, որ վերը նշված հայեցակարգը ԱՄՆ-ը վարչակազմի կողմից ներկայումս գրեթե չի քննարկվում, սակայն պաշտոնապես դրա չեղարկման մասին որև է հայտարարություն չի արվել:

Իրականում Մերձավոր Արևելքի «վերակառուցման» նոր դոկտրինը հիմքում դրված էր «կառավարելի քաոսի» տեսությունը, որի կիրարկման առաջին փորձը իրականացվեց 2003 թ. Իրաքում՝ «Ազատություն Իրաքին» ամերիկյան ռազմական գործողությունների շրջանակում: Հատկանշական է նաև, որ ամերիկյան ռազմական գործողություններն Իրաքում սկսվեցին և ավարտվեցին նախքան Բուշ-կրտսեր կողմից վերը նշված դոկտրինի հրապարակումը:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ «Ազատություն Իրաքին» ռազմական գործողությունների հետևանքով ոչ միայն Իրաքը հայտնվեց անչափ բարդ իրավիճակում, այլև խարխլվեց Մերձավոր Արևելքի անվտանգային համակարգը, որին ծանրագույն հարված հասցվեց 2011 թ. սկսված «արաբական գարնան» հետևանքով: Ուշագրավ է, որ պաշտոնապես ամերիկյան զորքերը Իրաքից դուրս եկան 2011 թ.՝ Բուշ-կրտսեր նախագահության ավարտից երկու տարի անց:

Ըստ էության, ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում հնարավորինս համակողմանիորեն և անաչառ կերպով ներկայացնել Ջ. Բուշ-կրտսեր մերձավորարևելյան քաղաքականությունը, մասնավորապես՝ իր կողմից առաջադրված նոր դոկտրինը, դրա գործիքակազմն ու ներդրումն Իրաքում՝ ԱՄՆ-ը քաղաքականության օրինակով: Հեղինակը ակադեմիական գիտականության

սկզբունքներով փորձել է վեր հանել Ջ. Բուշ-կրտսեր մերձավորարևելյան քաղաքականության ձևավորման վրա ներազդելու գործոնները: Հեղինակը՝ քննության ենթարկելով Մերձավոր Արևելքում ամերիկյան արտաքին քաղաքականության շրջանակներում «ժողովրդավարության խթանման» խնդիրը, գիտական քննարկման է դնում նաև այդ «ժողովրդավարության խթանման» կիրառման գործիքակազմը և դրա կիրառելիությունն Իրաքում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն իր համապատասխան ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Աշխատանքը գրվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով հարուստ գրականության հիմքի վրա: Ատենախոսության մեջ օգտագործվել են Ջ. Բուշի մերձավորարևելյան քաղաքականության ռազմավարական, գաղափարական և հայեցակարգային հիմքերի և գործիքակազմի վերաբերյալ մեծ թվով սկզբնաղբյուրներ և մասնագիտական գրականություն, որոնցից շատերը, նոր լույսի ներքո, ուսումնասիրվել և առաջին անգամ դրվել են շրջանառության մեջ:

Ժամանակագրական առումով աշխատանքն ընդգրկում է Ջ. Բուշ կրտսերի նախագահության տարիները՝ 2001-2009 թթ.: Ջ. Բուշ-կրտսեր մերձավորարևելյան քաղաքականության, ինչպես նաև ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունների համապարփակ վերհանման նպատակով ուսումնասիրվել և համեմատական վերլուծության է ենթարկվել նաև Ջ. Բուշ-կրտսերին նախորդած, ինչպես նաև հաջորդած նախագահների մերձավորարևելյան քաղաքականությանը բնորոշ առանձնահատկությունները:

Աշխատանքի մեթոդաբանության հիմքում ընկած են կոնտենտ և դիսկուրս, պատմահամեմատական և քեյս-սթադի վերլուծության մեթոդները, փաստերի համեմատական և համադրական մոտեցումները, ինչը ճիշտ կերպով ուղղորդել է աշխատանքի շարադրումը, որի բոլոր մասերը միմյանց կապված են տրամաբանական ամուր կապով:

Աշխատանքն ունի տեսական և կիրառական նշանակություն ԱՄՆ-ի պատմության, Ջ. Բուշ-կրտսերի, ինչպես նաև ԱՄՆ-ի մերձավորարևելյան

քաղաքականության և դրա առանձնահատկությունների ուսումնասիրման և բացահայտման տեսանկյունից: Այն հիմք է այս ուղությամբ քաղաքագիտական և պատմագիտական հետագա հետազոտությունների համար: Աշխատանքում առաջ քաշված դրույթները և եզրահանգումները կարող են օգտակար լինել պատմաբանների, միջազգային հարաբերությունների մասնագետների, քաղաքագետների և արևելագետների համար՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության տեսական և գործնական կողմերը բացահայտելու համար՝ մերձավորարևելյան ուղղության օրինակով: Միևնույն ժամանակ աշխատանքը կարող է նաև իր ներդրումն ունենալ Հայաստանում ամերիկագիտության զարգացման գործում:

Ատենախոսը միանգամայն հիմնավոր կերպով եզրակացնում է, որ՝ երկբևեռ աշխարհակարգում «ժողովրդավարության խթանումը» ԱՄՆ-ի կողմից երբեք չի դիտարկվել որպես արտաքին քաղաքականության վերջնանպատակ, այլ ժամանակ առ ժամանակ կիրառվել է որպես տարածաշրջանային քաղաքականության իրականացման գործիք: Միաբևեռ աշխարհակարգում Ջորջ Բուշ կրտսերի օրոք «ժողովրդավարության ներդրման» քաղաքականությունը Մերձավոր Արևելքում դարձավ միջոց՝ վերահիմաստավորելու ամերիկյան արտաքին քաղաքականությունը, որին աջակցելու եկավ «իսլամական ահաբեկչության» և նոր թշնամու դեմ պայքարի միֆոլոգեմները:

Կիսում ենք նաև հեղինակի՝ Աստղիկ Հայրապետյանի, այն պնդումը, որ լինելով արաբական Մերձավոր Արևելքի մանրակերտը՝ Իրաքը դարձավ Բուշի դոկտրինի բոլոր 4 հիմնասյուների կյանքի կոչման հարթակը: Ըստ այդմ՝ չորս հենասյուներն էին՝ ԱՄՆ-ի ռազմական գերակայությունը, տնտեսական առաջնությունը, «խելացի ուժի» քաղաքականությունը և երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո հիմնականում ամերիկյան նախաձեռնությամբ ստեղծված միջազգային կառույցների գործունեությունը և դրանցում ԱՄՆ-ի գերակա դիրքը:

Ատենախոսության մեջ առաջ քաշվող թեզերն ու դրույթներն ի ցույց են դնում ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հեղինակի հմտությունները և կարողությունը, իսկ օտար լեզուների իմացությունը նպաստել է աշխատանքում ուսումնասիրվող հարցերի բազմակողմանի քննությանը:

Սակայն սույն ատենախոսությունը զերծ չէ նաև մի շարք թերություններից և բացթողումներից.

1. էջ 32-ում, հեղինակը գրում է. «Այնուամենայնիվ, Ծոցի ճգնաժամի հանգուցալուծման արդյունքում ստացվեց այնպես, որ ԱՄՆ-ն իր դաշնակիցների հետ միասին «պարտության մատնեց բռնակալ ագրեսորին Մերձավոր Արևելքում՝ ազատագրելով հավատարիմ դաշնակցին», սակայն միևնույն ժամանակ չհեռացրեց Սադդամ Հուսեյնին իշխանությունից, վերջինիս վարչակարգը տապալելու ուղղությամբ հույսեր կապելով Իրաքի ժողովուրդի հետ, իսկ Քուվեյթում էլ իր հերթին չամրապնդեց իրական ժողովրդավարություն՝ վերականգնելով ցեղապետերի իշխանությունը՝ ընտրովի ներկայացուցչական մարմինների ձևավորման փոխարեն»: 1. Ծոցի ճգնաժամը չհանգուցալուծվեց, այլապես չէր լինի 1998 թ. «Աղվեսն անապատում» և 2003 թ. «Ազատություն Իրաքին» ռազմական գործողությունները: Իրաքը պարտվեց, բայց մնաց Սադդամի Հուսեյնի իշխանությունը: 2. Սադդամին իշխանությունից չհեռացնելու գրավականը ոչ թե Իրաքի ժողովուրդն էր, այլ 1991 թ. սկիզբ առած հարավսլավական ճգնաժամը. ԽՍՀՄ հոգեվարքի իրողությունների պայմաններում, ԱՄՆ-ը շտապեց Արևելյան Եվրոպա, պայմանական աշխարհաքաղաքական վակուումը լրացնելու համար: 3. Քուվեյթում իշխանության համակարգի փոփոխության հարց առհասարակ դրված չէր, հետևաբար անհասկանալի է թե ինչ ընտրովի ներկայացուցչական մարմինների մասին է խոսքը:
2. էջ 33-ում հեղինակը գրում է. «Եթե Բ. Քլինթոնի նախագահության առաջին տարիներին Իսրայելը, իսկ մյուս կողմից՝ Պաղեստինն ու Հորդանանը բանակցություններն իրականացնում էին սեփական նախաձեռնությունների ցուցաբերմամբ՝ ԱՄՆ-ի ոչ ուղղակի մասնակցությամբ և խրախուսմամբ, ապա երկրորդ փուլում Յասիր Արաֆատի և Բենիամին Նեթանյահուի միջև վստահության բացակայությունը»: Պատմական փաստերը վկայում են, որ մասնավորապես սկսած քեմփդեվիդյան գործընթացի մեկնարկից, ԱՄՆ-ը

անմիջական միջամտում է և հաճախ համակարգում պաղեստինա-իսրայելական բանակցային գործընթացը:

3. էջ 34 հեղինակը գրում է «Իրաքի՝ քուվեյթյան ագրեսիայից հետո Ծոցի արաբական պետությունների շրջանում ԱՄՆ-ի հետ անվտանգության պայմանագիր ձեռք բերելու միտումը, տարածաշրջանում իրադրության կայունացման դրական միտումները, ինչպես նաև ԱՄՆ-ի մասնակցությամբ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման հեռանկարը»: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը Ծոցի անվտանգային խնդիրներից խոսելիս՝ Իրաքի պարտությունից հետո, անդրադառնար նաև 1991 թ. Ծոցի երկրների մի կողմից և Եգիպտոսի և Սիրիայի միջև մյուս կողմից ստորագրված «Դամասկոսի հռչակագրից», որն մի շարք կարևոր գործոնների ցուցիչ է, այդ թվում և Ծոցի շրջանում ԱՄՆ-ի քաղաքականության զսպման:
4. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը աշխատանքի առաջին գլխում հայեցակարգային մոտեցմամբ ներկայացներ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության երեք փուլերը՝ համեմատական մանրադիտակի միջոցով, ցույց տալու համար այդ քաղաքականության զարգացման առանձնահատկությունները և հետխորհրդային շրջանի հետ կապը: Մասնավորապես՝ առաջին փուլ՝ 1945-1971 թթ., երկրորդ՝ 1971-1979 թթ. և երրորդը՝ 1979-2011 թթ.:
5. Տարակուսանք է առաջացնում աշխատանքի 1.2 վերնագիրը «ԱՄՆ-ի հետսառըպատերազմյան շրջանի մերձավորարևելյան քաղաքականության լեգիտիմացման իրավական հիմքերը»:
6. էջ 51-54՝ հեղինակը վերնագրել է ««Զսպման դոկտրինի» շրջանակներում ընդունված ներքին իրավական ակտերը Իրանի առնչությամբ»: Որքանով է սա ընդգրկվում բուն թեմայի շրջանակներում, մանավանդ, երբ աշխատանքի գլխավոր հարցը Բուշի դոկտրինն է Իրաքում:
7. էջ 55-80, 2.1 հեղինակը վերնագրել է «ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման նորպահպանողականների

մոտեցումները» և աշխատանքի զգալի ծավալը նվիրել է տեսական հարցերի քննարկմանը: Կարծում ենք, որ այն սույն աշխատանքի շրջանակներում կարելի էր ներկայացնել մի քանի էջերի շրջանակներում:

8. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը առանձին ենթավերնագրով անդրադառնար «կառավարելի քաոսի» տեսությանը՝ այն ներկայացնելով նաև Բուշ-կրտսերի դոկտրինի շրջանակներում: Առհասարակ այն ներկայացվեր նաև «Մեծ Մերձավոր Արևելք» աշխարհաքաղաքական եզրույթի շրջանակներում:
9. Հեղինակը՝ ներկայացնելով Իրաքի վրա սևեռված ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը (գլուխ երրորդ), չի անդրադառնում «պաղեստինյան հարցի լուծումը Բաղդադի միջոցով» իսրայելա-ամերիկյան ռազմավարական տեսակետին, որը նաև պաշտոնական Վաշինգտոնի՝ Իրաքի նկատմամբ որդեգրած քաղաքականության մոտիվացման հենասյուներից է:
10. Կարևոր ենք համարում, որ հեղինակը անդրադառնար նաև 2003 թ. աշնանը Բուշ-կրտսերի կողմից «Մերձավոր Արևելքի վերակառուցման» վերաբերյալ հայեցակարգի հրապարակմանը հաջորդած արաբական մի շարք երկրների արձագանքին, որը քաղաքական ձևակերպում է գտել ԱՊԼ գագաթնաժողովում:

Մեր կողմից արված դիտողությունները և նկատառումները ամենևին ստվեր չեն գցում աշխատանքի ընդհանուր բարձր որակի վրա:

Աստղիկ Սերգոյի Հայրապետյանի ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
Արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող՝
պ.գ.թ., դոցենտ Գոռ Գևորգյան
17. 06. 2024

Կ.Ջ.Բ. Գոռ Գևորգյանի ատենախոսությունը քննարկված է
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Ցիրֆարդուց.
Հավանություն տրվեցավ